

Առաջարկություններ

«Հանրային ծառայության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Հանել համարակալումները. հոդված 1.-ում` 4.-ը, հոդված 3.-ում` 3.-ը, 4.-ը, 6.-ը, 8.-ը:
2. Պարզ չէ հոդված 2.-ի կետ 1.-ում «...այլ հարաբերություններ»-ի շրջանակը:
3. Հոդված 3-ի 1.-ին կետի`
 - 10)-րդ ենթակետում «ուղղված» բառից հետո ավելացնել «ուսուցողական» բառը,
 - 12)-րդ ենթակետում «կատարումը» բառից հետո ստորակետը փոխարինել վերջակետով, «փոփոխվում է» բառերից առաջ ավելացնել «Քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձը» բառերը,
 - 13)-րդ ենթակետում «կատարումը» բառից հետո ստորակետը փոխարինել վերջակետով, «պաշտոնավարում է» բառերից առաջ ավելացնել «Հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը» բառերը, «պաշտոնավարում է» բառերից հետո հանել «մինչև» բառը, «(մարմնի)» բառից հետո ավելացնել «հայեցողությամբ» բառը, իսկ շարունակությունը և վերջին նախադասությունը ամբողջությամբ հանել,
 - 14)-րդ ենթակետում «զբաղեցնող» բառից հետո հանել «պաշտոնատար» բառը, «կատարումը» բառից հետո ստորակետը փոխարինել վերջակետով, «ժամանակահատվածում» բառից հետո ավելացնել «պետական պաշտոն զբաղեցնող անձը» բառերը,
 - 15)-րդ ենթակետում «իրականացնող» բառից հետո ավելացնել «անձ» բառը:
4. Հոդված 4-ի 1.-ին կետի 8)-րդ ենթակետում «դեպարտամենտում» բառը փոխարինել «ատյաններում» բառով:
5. Հոդված 12-ի 2.-րդ կետում «...և 5-րդ կետերի» բառերը փոխարինել «կետի» բառով, որովհետև այստեղ անհասկանալի է ժամկետային պարտադիր գինվորական ծառայությունից խուսափելու պատճառով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքի զրկումից բացի առավել խիստ չափանիշ սահմանելու հնարավորությունը:
6. Հոդված 15-ի 1.-ին կետում «կամ» բառը փոխարինել «և, կամ» բառերով, 5.-րդ կետում «ստաժը ներառող» բառերը փոխարինել «ստաժում ներառվող» բառերով:
7. Հոդված 22-ի 1.-ին կետի 1)-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.
«1) Պետք է` հրապարակայնորեն չընդդիմանա պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից վարվող քաղաքականությանը, զերծ մնա այնպիսի

գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել պետական մարմնի աշխատանքները կամ վարկաբեկել և հեղինակազրկել նրան.»

3)-րդ ենթակետում հանել «, վերադասի, իրեն ենթակա», «այլ» բառերը:

8. Հոդված 23-ը ամբողջությամբ հանել:

9. Հոդված 24-ի 5.-րդ կետում պարզաբանման անհրաժեշտություն կա, թե անմիջապես ով՞ է նկատի առնվում «վերադաս» ասելով, 6.-րդ կետը հանել:

10. Հոդված 25-ի`

1.-ին կետը` ա) հանել, քանի որ ամփոփված է Հոդված 26-ի 1.-ին կետի 7)-րդ ենթակետում, կամ` բ) 1.-ին կետում «Հանրային ծառայողը» բառերից հետո ավելացնել «ծառայողական պարտականությունների հետ կապված գործողությունների կատարման համար» բառերը, իսկ «բնակվող ընտանիքի անդամներին» բառերը փոխարինել «փոխկապակցված անձանց» բառերով:

2.-րդ կետի 4)-րդ ենթակետում միանշանակ չի ընկալվում գործածվող «ողջամտորեն ընկալվել» բառերը:

3.-րդ, 4.-րդ և կետերը հանել, քանի որ հակասում է Սահմանադրության 22-րդ հոդվածին:

11. Հոդված 28-ի 1.-ին կետի 8)-րդ ենթակետից հետո ավելացնել նոր ենթակետ. «9) Ռոտացիայի, աշխատանքի վայրի հասցեափոխման դեպքում անհրաժեշտ է հանրային ծառայողի համաձայնությունը»: